ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2011թ. օգոստոսի 2 թիվ 74-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.22 կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2011թվականի հիմնական միջոցառումների պլանը՝ ***կարգադրում եմ.***

1. 2011թվականի սեպտեմբերի 15-16-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի վարչական շենքում անցկացնել հրամանատարաշտաբային ուսումնավարժություն՝ <<Խոշոր անտառային հրդեհների հրդեհաշիջման կազմակերպումը>> թեմայով:
2. Հրամանատարաշտաբային ուսումնավարժության ղեկավար է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետը, ուսումնավարժության ղեկավարի տեղակալ՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալ Մ. Առաքելյանը:
3. Ուսումնավարժությանն ընդգրկել՝

1) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի ղեկավար կազմին.

2) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզային փրկարար վարչությանը.

3)Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի քաղաքացիական պաշտպանության ծառայություններին.

4) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի տարհանման հանձնաժողովին

5) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Բյուրական, Անտառուտ համայնքների, Բյուրականի անտառտնտեսության ղեկավար կազմերին, մարզի տարհանման հանձնաժողովներին.

4. Ստեղծել հրամանատարաշտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբ՝ հետևյալ կազմով.

1) Շտաբի պետ - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետ փրկարարական ծառայության գնդապետ Շ. Շամիրյան.

2) Շտաբի պետի տեղակալ - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ս. Հովսեփյան:

5. ՈՒսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

1) Կազմել հրամանատարաշտաբային ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերը և զեկուցել ուսումնավարժության ղեկավարին.

2) Հրամանատարաշտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝ մինչև 2011 թվականի օգոստոսի 30-ը նախապատրաստել ուսումնավարժության բոլոր մասնակիցներին, մշակել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերը և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի հաստատմանը:

6. Քաղաքացիական պաշտպանության շտաբի պետի տեղակալին՝ ապահովել հրամանատարաշտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբին անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

7. Հրամանատարաշտաբային ուսումնավարժության ղեկավարի տեղակալին՝

1) Կազմակերպել հրամանատարաշտաբային ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման գործընթացը.

2) Հրամանատարաշտաբային ուսումնավարժության նախապատրաստման աշխատանքների ընթացքի վերաբերյալ պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին.

3) Մինչև 2011 թվականի օգոստոսի 30-ը հրամանատարաշտաբային ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

8. Սույն կարգադրությունը հանձնել հրամանատարաշտաբային ուսումնավարժության մասնակիցներին ստորագրումից հետո՝ եռօրյա ժամկետում:

9. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ